

ՊԱՐԿԵՎ Ա.ԲԵՂԱ ԳԵՈՐԳՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԴՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 18-ՐԴ ԴԱՐՈՒՄ*

1792 թվականին լույս է տեսնում նաև «Տեսրակ համառօտ և լի իմաստեախոն բանիք Յովիսանեէս Երգնկացոյ, որ և ասի Մործուեցի», կամ «Վկապասանուրին զերկնային մարմնոց», որ տիեզերագիտական բովանդակություն ունի:

1793 թվականին լույս տեսած աշխատությունների թվին հետ պատկանում «Գիրք պղօքից որ կոչի Աստուածաղերս», Ղազար կաթողիկոսի և «Բժշկարան համառօտ, շարադրեալ ի ներենն ըմբիկ Զուղայեցի Յօհաննեէս Քալաբրարեան պարոն Պետրոս»:

Քալանթարյանի «Բժշկարանը Արդությանի տպարանի կարելոր հրատարակություններից մեկն է: Թեև այն շատ համառօտ է, բայց նորություն է նրանով, որ իր մեջ ոնի դեղատումները ըրուցեկիթումիւ լատիներեն անումով, բացատրում է դեղեր պատրաստելու եղանակը, նշանակում է շափերը, ընդունելու կերպերը և այլն:

Ինչպես նշում է պրոֆ. Լեոն¹, հետաքրքրական է, որ այդ աշխատությունը գրելու դրդել է նմանապես այն շարժումը, որ Հովհաննեփ Արդութեանն ակսել է Ռուսաստանի հայության մեջ, Քալանթարյանը իր գիրքը նվիրում է նրան և իր ուղերձում հետևյալն է գրում. «Տեսեալ իմ, թէ՝ ի կառուցանել բարձր. Սրբազնութեանդ գրաբեառիթ դպրոցսն և ի պայծառացուցանելն զազգաօգուստ տպարանն (որ ի նորն նախիշնան) բոլոր հայրենասէր ազգ Հայոց՝ ի ծագաց երկրի՝ ի հեռաստան կողմանց՝ մինչ ցը ի Հնդկական


* Շաբումակված ամսագրի 1954 թվականի № № IX-ից և XI-ից:

¹. Լեոն, «Հայոց պատմություն», երրորդ հատոր, Երևան, 1946 թ., էջ 1058,

նահանգաց ինքնայօժար կամօթ և զուարթամիտ առատաձեռնութեամբ նուիրամատուց գուանիլն՝ երշանկութիւն ինքեանց՝ և մեծ բարութիւն՝ բազմացրիւ ազին իւրեանց համարեցան (որպէս և է իսկ): Ուստի՝ և անքատ ի մեծագոյն գոյից՝ զգեղեցիկ նախանձն նախանձեալ, ըստ որում մասն և անդամ Հայկազեան ագնուասերունդ ազին, ի յօգուտ հասարակաց բարոյն՝ տումալ զտկար անձն իմ յաշխատանս՝ զփորձառեցեալ դեղորայս՝ զանազան ցաւոց՝ պատահելոց մարդկային սեփի փնջասարաս ի մի հաւաքմամբ՝ յառաջ ածի զալս փոքրիկ բժշկարան, ընդ նմին և զհամառօտ բառարանն նորին: Եւ զայս երկու լումայս՝ զէտ միոյ նաքարակսի ցանկանալով ցանկացայ արկանել ի գանձանակ՝ հայակապ գրքատան՝ բարձր Սրբազնութեանդ:

Որ եթէ օգտակար և հաճոյ թուիցի օգտակամ Սրբութեանդ, և բարձր հրամանաւդ տպրմամբ ի լոյս ընծայիցի, ո՛չ սակաւ երշանկութիւն և ինքեան համարի իմս նուաստութիւն, գտանելով արժանի՝ ծառայելոյ մերոյինս յաբեթասերունդ ազին:

Աշխատությունը բաժանված է երկու մասի: Առաջին մասում նկարագրված են հիվանդությունները և դրված են դեղատումները լատիներեն լեզվով, բայց հայերեն տառերով, իսկ երկրորդ մասը դեղերի բառարանն է: Արդությանի տպարանի այս նոր գիրքը դարձյալ կարևոր նշանակություն ունեցավ: Ինչպես նշում է բանասէր-բժիշկ դոկտ. Վ. Թորգոմյանը, «ապագա հայ բժշկարաններու առաջնորդ կարելի է նկատել համառոտ բառարանն... Մեծ իրավամբ... զՔալանթարյան համարելու ենք Ժի դարու հայ բժշկաց նշա-



1793 թվականին, Նոր-Նախիջևանում, Հովսեփ արքեպիսկոպոս Արդուրյանի տպարանից լույս տեսած Պետրոս բժիշկ Քալանքարյանի «Բժշկարան համառու» աշխատության տիտղոսաթերթ:

նավորագույնը...»։ Գիրքը լույս է տեսել «ի Հնդիկս ի Սուպաթ քնակեալ Զուղայցի պայծառ իշխան Աղայ Յօհանջան Գէրաբեանսի ծախով։ Ինչպես ասված է սույն գրքի հիշատակարանում, մեկնաւար նյութական մեծ օպնություն է ցուց տվել նաև Նոր-Նախիջևանի Խրիլու հայկական դպրոցներին և տպարաններին։ Սույն գիրքը ևս տպագրվել է Թադեոս վարդապետ Կոստանդնուպոլիսացի Մարուքայանի կողմէից։ Գրքի սկզբում զետեղված է Հեղինակի՝ Պետրոս թիֆլոցի Քայլանթարուանի առողջութեան։

Սույն համառոտ բժշկարանն ունի
18×20,5 սմ. մեծություն և բաղկացած է
136 էջից: Գիրքը կաշեկազմ է: Խնչվես աս-
ված է գրքի հիշատակարանում, բժըշ-
կարանը լույս է տեսել 600 օրինակ տպա-
ռանակով:

Նույն 1793 թվականին լուսում է տեսնում «Տարեցոյց և օրացոյց յորում զայտաճին ամենային տօնք և պահի ազգին Հայոց», որն

ոմի 9,5×15,5 սմ. մեծություն և բաղկացած
է 56 էջից:

Դարձյալ 1793 թվականին լուս է տես-
նում նաև «Պատմութիւն Թէլամաքի որդ-
ւոյ Ֆուփիսի», Ֆենելոն Ֆրանշէսկոյի, «Գոռ-
խագիւալ ի Գալլիացւոց և ի յիուալիաց-
ւոց լեզուէ ի հայ բարբառ, ջանիւ և աշխա-
տասիրովիեամբ պարոն Մարդար Զաքարիայի
Խօնէնց Երևանցւոյ...»: «Սրբագրեալ զգու-
շութեամբ ի ծեռագրոյ թարգմանչին ի Բաղ-
դեռ վարդապետէ Կոստանդինուպոլսիցւոյ
Մարտուգեան»: «Արդեամբք և ծախիւթ՝ պանիւ
պանծայի իշխան՝ աղայ Եղիազարիան՝ ա-
ղայ Յօհաննէս վեհազնեայ պարոն պօլիու-
նիկին, ի յիշատակ կանխաթառամ միակ
որդույն իւրոյ՝ աղայ Յարութիւն ի Տէր
հանգուպելու»:

Ֆենելոնի թերամաքը բաղկացած է երկու հատորից: Երկու հատորները միասին պարունակում են 371 էջ և ունեն 18,5 \times 26,5 ամ. մեծովյան: Գրքի առաջաբանը նվիրված է «Եռամեխ» և գերեզանիկա Հովսեփ արքեպիսկոպոսին, որից հետո դրված է ըրունագրման շին առ ընթերցօղս Արամեան բանասիրաց» ներածությունը: Այստեղ թարգմանիչը կինսագրական համաստու տեղեկություններ է տալիս Ֆենելոն Ֆրանչեսկոյի և նրա աշխատության գրվելու հանդամանքների մասին, այնուհետև ցավ է հայտնում, որ մինչև իր թարգմանությունը ուշագրությունը չի դարձվել այդ աշխարհահողակ և բազմաթիվ լեզուներու թարգմանալած գիրքը հայերեն ունենալու վեա:

Հ-դ հատորի վերջին կցված է հիշատակարան՝ հնողկահայերի նվիրատվության, նոր-նախիեւանի Ս. Խաչ վանքի օծման, Արդությանի՝ 1793 թվականին դեպի Պետերպոլսկ կատարած ճանապարհորդության, այստեղ կայրոււռու կողմից ընդունվելու և ականակուտ ադամանդայա խաչով ու մանթիով պարզմատրվելու, Ղրիմ ճանապարհորդելու և այլ հետաքրքիր դեպքերի մասին:

Թելեմաքի հայերեն թարգմանեմ ու տպացրելը մեր այն ժամանակվա իրավանության մեջ մի խոշոր երևույթ էր ո թե նկատի առնենք նաև գրքի բնագիրը լուսաբանող ծառությունների թարգմանությունները, որ ճամակցողություն են տալիս անտիկ աշխարհի, ավանդությունների, դիցաբանությունների մասին, մի բան, որ նորությունը մեր գրականության մեջ, այն ժամանակ ճամականալի կլինի, թե ինչպիսի ծառայություն էր մատուցում Արդությանի տպարանը՝ այ ժողովրդին մտավորապես զարգացնելու ողջում:

1794 թվականին լուս է տեսնում
Գրքույս կոչեցեալ հոգեցան յերկուց ճա-
փ՝ Մըրուն Յօհաննոս. Ոսեներաբից Ալբո-

րիանդրեալ. գրեոյ՝ երրորդ և ի չորրորդ նախօցն ուսանառեալ ի Յակոբայ Պատրիարքի կ. Պոլսոյ, ի շահ և ի յօդուտ կասարելութեան կենաց ցանկացողաց» հատորը, որն ոման $10,5 \times 7,5$ ամ. մեծովիոն և բաղկացած է 72 էջից: Զարքհանալլյանն ու Գ. Խենիաշը այս գիրքը չեն հիշում:

Թարձալ 1794 թվականի հրատարակությունների թվին են պատկանում ևս երկու գրքեր՝ «Ենորհը լատեար սրբազն պատարաց», որի երկրորդ մասը վերնագրված է «Թիրք աղօրից», և «Տետրակի համառօտ բառարանի, արարեալ և շափարերմամբ ուսանառորեալ» աշխատականի մեջաւացաւի պատկանաց գրքի Տիրիկեցու թորոսեան, ի փառ Տեղան Աստուծոյ, և ի վայելումն նորավարժից դպրատան»: «...Արդեամբք և ծախիս՝ ի Հնդիկս ի Դաքայ բնակեալ՝ մեծահաստ և բարեացապարտ պարոն Մարտիրոսին Տէր Ստեփանոսինան»:

Տետրակի առաջարանը գրել է տպարանի անխոնջ աշխատող Թաղեսոս վարդապետը, որից երեսում է, որ սույն տետրակի հեղինակը իր ուսուցիչն է եղել, և դեռ այդ հանգուցյալ ուսուցիլը մի շարք այլ աշխատություններ էլ է թողել ձեռադիր վիճակում:

Տետրակի հիշատակարանում խոսվում է գրքի մեկենասի, ինչպես նաև առհասարակ հնդկահայերի կողմից տպարանին ցուց տրված աջակցովիյան մասին. «Յորում ժամանակի՝ ոչ թէ զսոյն զայս այսու զուարթամիտ միայն՝ ունիմք արժանաւոր դրուատիս՝ ըստ մեծագործովիթեանց» ի նմանէ՝ ի յօդուր հանուրց հայկազնէից արարելոց, ի զիր արձանացուցանել, այլ տպմամբ ի լոյս ընծայեալ՝ որպէս ի յաստղալից նրինի ամենափայլ ճառագայթեալ է տեսանել՝ Մարտասու, Սուրաթու, Կալկաթու, Սէյլարատու, Մուզիբանդարու, և ալլոցն Դաքայու՝ օրէնքալ ժողովրեան՝ սերտ սէրն, բարեաց յառաջացման՝ ախօրժանօք կամեցողովիթեան՝ շերմեռանդովիճն, և առատաձեռն զուարթամիտ տրոց՝ արդիւնատրովիթին»: Տետրակին ոմի $10 \times 15,5$ ամ. մեծովիոն և բաղկացած է 96 էջից:

Այս շրջանում տպարանի ոնեցած հաջողովիյանը մեծապես նպաստում է Թաղեսոս վարդապետ Կոստանդնուպոլիսեցին, որը բացի տպարանի ղեկավարովիթյունից, ստանձնել էր նաև նոր-նախիչեան քաղաքի վանքի համելությունը, ինչպես նաև դպրոցի ղեկավարման գործը: Բայց ինչպես հայ բոլոր մշակները, այնպես էլ Արդութան արքապիտությունն ու Թաղեսոս վարդապետը ոնեցնում են իրենց թշնամիները, որոնք սեսում են խանուարել նրանց ազգօգուտ փործունեությունը: Թաղեսոս վարդապետը հաճախ ընկնում է հուահատության մեջ, բայց անվե-

հեր Արդությանը Թաղեսոս վարդապետին իր գրած նամակներում մեծարելով նրա մատուցած ծառայությունները, խորհուրդ է տալիս լընկճվել, նա մի նամակում գրում է. «...Այլ զեկ և զաշխատանս քոյ և զպիտանատրութիւն գործոյդ գիտացին թէ ոչ, որպէս ինձ նմանապէս և քեզ, ոչինչ է փոյթ հոգալ զնոցանէ, զի գուարին է կուրաց զոյս արեգական քարոզել և խելամուտ անել... վասն այսմ մի՛ ինչ հոգալ, այդ խուժանն ալլովք ամենայնիւր, յայնժամ ի բաց բառնի ի քէն յորժամ տացէ մեծ Աստուած տեսանել զմիւնեանսու: Արդությանի տպագրական ազգօգուտ գործունեության պատմության մեջ Թաղեսոս վարդապետի անձնավորությունը մեծագույն հույսն է հանդիսացել մեծ եկեղեցականի համար: «Սիրելի որդի, — գրում է Արդությանը Թաղեսոս վարդապետին, — դու ինքնին քոյ խղճմտանօքն զիտես, որ ես այդ տպարանն ենյ յուսովն առեալ մտի ի ներելոյ ծանրութեան քեղին»:



1793 թվականին, նոր-նախիչեանում, Հովսեփ արքեպիսկոպոս Արդությանի տպարանից լույս տեսած «Էջշկարան համառօտ» աշխատության հեղինակ Զուղայեցի Պետրոս բժիշկ Քալանթարյան:



1793 թվականին, Նոր-Նախիչևանում, Հովսեփ արքեպիսկոպոս Սրբուրյանի տպարանից լուս տեսած Ֆեներենի «Պատմութիւն Թէլամժի» որդոյ Յուլիսի» աշխատորյան 2-րդ հատորի տիտղոսաբերը:

Մեծ է եղել Արդությանի ցույց տված սկզբ Թագեռս վարդապետի նկատմամբ. ահա թե ինչո՞ւ գեռևս տպարանը Պետերուրդ եղած ժամանակը լսելով Թագեռս վարդապետի հիվանդության մասին, Արդությանը իր մի բարեկամին ահարեկված գրում էր, «Թագեռս վարդապետն հիւանդացեալ ի Պետրուրդ, ևս աստ ցաւագարեալ...» և այլն¹:

Նոր-Նախիչևանի Ս. Խաչ վանքի տպարանը հետագայում մենք տեսնում ենք, որ փոխադրվում է Աստրախան, որը առաջնորդանիստ քաղաք էր և իր ժամանակի, մեծ մասը այդտեղ էր անցկացնում Արդությանը: Նա կարծում էր, որ է՛լ ավելի մոտիկից հովանավորելով տպագրական գործը, նա է՛լ ավելի մեծ հաջողության կերպողանա հասնել: Բայց Գ. Լոռյանի, Նոր-Նախիչևանի տպարանի ամենավերջին հրատարակություն-

¹. Հայկական ՍՍԾ Պետական մատենադարանի ձևագիր № 2949, թ. թ. 144ա, 183թ., 234ր:

նը 1796 թվականին տպագրված «Ատենարանութիւն» է եղել: Գ. Լոռյանը մեջ է բերում այդ «Ատենարանության» տիտղոսաթիւթի միայն համառոտ շարադրանքը², այնինչ Հ. Ա. Ղազիկյանն³ ու Թիոդիկը⁴ մեջ են բերում նույն «Ատենարանության» տիտղոսաթիւթի ընդարձակ շարադրումը, որից էլ պարզվում է, որ գիրքը լույս է տեսել ո՛չ թե Նոր-Նախիչևանում, այլ հենց Աստրախանում: Ահա՝ այդ տետրակի ամբողջական վերնագիրը. «Թանք ասացեալ պսակազգեաց Սրբազն Արքապիսկոպոսէ՝ Հիւսիսային կողմանս եղեալ ամենայն ազգիս Հայոց ի 1796 թույ ապրիլի 5 ի Ղզլար, ի Վերափոխման՝ ամենասուրբ Աստուածածնայ յեկեղեցոց Հայոց ի ներկայութեան բարձր գերազանցութեան ննարալ անշեֆ, և զանազան նշանակիր կատալեր նվան Վասիլիչ Գուղիչին և այլ գորապետաց. ի ժամանակի. շուելոյն զօրացն՝ իրուհոյ կայսերական ժեծութեան՝ ի Ղզլարու ի Պարսս, ընդ կառավարութեամբ՝ պայծառափայլ գրաֆ Վալերիան Ալեքսանդրովիչ Զուրովին: Տաեալ ի 1796 թույ, ի մայիսի 5 ի տպա նորին բարձր Սրբազնութեան ի Ամժարիսան»:

1797 թվականին Աստրախանում լույս է առնենում «Մեկնութիւն սաղմոսաց Դարի» գիրքը, «Յօրինեալ սպանչելի աստուածարանութեամբ... մեծին Վարդանայ Բարձրերդցոյ՝ լեզուագիտ և բազմավաստակ վարդապետի Հայոցս... ի խնդրոյ արհիական Տեառն Յօհաննու Բագրատունուց՝ առաջնորդի սուրբ ուխուտին Հաղբատու, և աշակերտաց իւրոց: Ի թագաւորութեանն Հայոց՝ որ ի Կիվիկիս՝ Հեթմոյ առաջնորդ Յամի Տեառն 1251: Եւ ի թուականութեանն Հայոց Խօսն Հարիւր»: Տպագրվել է «Արդեամբք և ծախիք՝ ի Սուրբ բնակեալ՝ խօչայ Մինասէնց Գրիգոր աղայի որդի՝ ի Քրիստոս հանգուցեալ աղայ Յովհաննէսին Զուրայից-ւոյ»⁵:

Այս գիրքն Արդությանի տպարանի ամենալավագույն հրատարակությունն է: Տպագրությունը կատարված է մեծ խնամքով. թուղթը սպիտակ է, տառերը մանր, բայց նոր և ընթեռնելի: Սկզբում կամ մի նկար, որ

2. Գ. Լոռյան, «Հայ գիրք և տպագրության արվեստ», էջ 169:

3. Հ. Ա. Ղազիկյան, «Հայկական հին մատենագրութիւն», Վենետիկ, 1909—1912 թ. թ., էջ 250:

4. Թեոդիկ, «Տիպ ու տառ», 1912 թ., Կ. Պոլիս, էջ 180:

5. Գարեգին Լոռյանն իր «Հայ գիրք և տպագրության արվեստը» աշխատության մեջ, սիսակմամբ, այս գրքի տպագրման ծախրերը հոգացող մեկնատս է համարում Ղզլար բաղացում բնակլող Անտոն Շամանիցուն (էջ 170):

պատկերացնում է՝ Վարդան Բարձրերդյոցուն
նստած վիճակում, վարդապետական գավա-
զանը աշ ձեռքին և գիրքը ծնկան վրա. նրա-
նից քիչ հեռու գտնվում են նրա շորս վեղա-
րավոր աշակերտները՝ կանգնած ու շոքած
վիճակում, գրքերը ձեռներին. Նկարի տակ
գրված է.

«Մեծն Վարդան Հոգովով զմալլեալ,
իբրև զարդի լուսով փայլեալ,
Սորան հրեթէն լեզուին արքեալ,
Զիմաստու պող ուղիղ ճառեալ»:

Գիրքն ունի հայկական ոճի թոշնագրեր։
Կազմն ամբողջական կաշվից է։

Հիշատակարանի մեջ արձանագրված է,
որ գորի հրատարակումը կատարվել է «...ի
դառն՝ և յամենուատէք վշտապատ ժամա-
նակիս, յորում աղէտալի անցքն՝ ընդ ան-
րիծ և անարատ մալրս մեր Սուրբ Էջմիա-
ծին՝ յանօրէն բռնաւորաց, և յերկրորդ
Հռափսակայ, նոյնակէս՝ և ընդ անբախ-
տութեամբ պաշարեալ քաղաքն Թիֆլիզ, և
ընդ բոլոր կողմունս արևելեան նահանգի»:

Միշտ շարք անուններ թվելուց հետո՝ հիշատակագիրը խնդրում է հիշման արժանի համարել նաև «... զմեծ երախտաւորսն սոյն տպարանիս, և առատաւոր նովիօք իւրեանց՝ զպալծառ պահօղան սորին, զլուաւորչածին զիշխանս, և զզուարթամիտ ժողովորդս՝ բովանդակ Հնդկաց՝ երկրին, որք իւալիր տրովք իւրեանց՝ միշտ որպէս զարփի ի փայլեցուցանելն են զազգաօգլուտ տպարանս՝ ներ ազգիս Հայոց»։ Գիրքն ունի 12,5×20 սմ. մեծություն և բաղկացած է 520 էջից։

Մշտական գիրքը, որ Արդությանի տպարանի վերջին հրատարակությունն է, տպագրվել է 1800 թվականին։ Ինչպես երևում է գրքի տիտղոսաթերթից, նա լույս է տեսել այն շրջանին, երբ Արդությանը ընտրվել էր Ամենայն Հայոց Կաթողիկոս։ Գրքի վերնագիրը հետևյալն է. «Թարգմանութիւն պրիվելէկացն Հայոց բնակեցելոցն ի զանազան գաւառս Մեծին Ռուսաստանու, շնորհեցելոցն աստուածաբար խնամովի ի մեծէն ի կաձառս օծելոց՝ յօդուստափառ Կայսերէն և Խնճնակալէն ամենայն ոռաւաց. տպագրեցեալ հրամանաւ բազմարդիմ բարեացապարտ երախտաւորութեամբ ընկալնողի պարգևաց»։ Հոգէընտիր Հայրապետի Տեառն Յովսէփայ Սրբազնակատար Կաթոպիկոսի Սրբոյ գերագահ Աթոռոյն էջմիածնայ և Մայրագոյն Պատրիարքի Ամենայն Հայոց Յամի Տեառն 1800 հոկտեմբերի 29, ի յԱժդարիսան»։

Այս պրոյեկտը՝ «Արթիվէլէկաց», այսինքն պարզեցագրերի մի ժողովածու է, որտեղ կան ծիստերինա երկրորդի և Պավել Առաջինի

կողմից տրված մի շաբթ հրովարտակների թարգմանությունները՝ Նոր-Նախիջևանի, Գրիգորիոսի Աստրախանի, Ղզլարի, Մողոկի, Դերբենդի, Ղրիմի Հայերի վերաբերյալ (1779—1800 թ. թ.); Կան նաև մի քանի պարզեցրեր Արդությանի վերաբերյալ, նաև «Նշանք ցեղին՝ իշխանացն Երկայնաբազուկ Արդութեանց», որն հաստատել է Պամիկ Արդութեանց»:

ռազին կայսրը 1800 թվականի մարտի 22-ին:
Գրքույկն ունի $14,5 \times 20$ սմ. մեծություն
և բաղկացած է 44 էջից:

Արդությանի տպարանը Աստրախանում,

ինչպես երևում է այստեղ բերված հրատարակությունների թվից, այնքան էլ արդյունավետ գործ չի կատարել. պատճառը, Պուկան կաթողիկոսի մահվանից հետո, հանդիսելով հայտնի աթոռակալական կոփիվներն էին, որոնք ստիպում էին Հովսեսի արքեպիսկոպոսին զրադշել ավելի կարելոր հարցերով, քան տպարանինն էր, և որոնք վերջանում են նրանուի, որ նա, ուստաց արքու-


S B S P U N
E C U A D O R E S P E R U G L

4. Արարեալ, և շամփարերամբ ռատեա
5. ուղիւն աշխատասիրութ Պայտա Պատա
6. ասց Դադի Տեր ըկէց ու թարառեան,
7. ի համա Տն այ, և ի վայնըրու Թե նորու
8. մարդիկ Պայտաստու:

U.S. GOVERNMENT PRINTING OFFICE 1914 10-1250

B-4 S^r 1794. Wm. 15.

1794 բվականին, նոր -Նախիշեանում, Հովսեփ արքեպիսկոպոս Արդուրյանի տպարանից լուս տեսած Տյուրիկեցի Պողոս դպիթորայանի «Տետրակ համառու բառարան»:



1797 թվականին, Աստրախանում, Հովսեփ արքապահու Արզույանի տպարանից լույս տեսած Վարդան Բարձրերդյուր «Մեկնորին Սաղմոսաց Դաւթի» գրքի սիտղոսաթերը:

Նիփի պաշտպանությամբ, ընտրվում է կաթողիկոս և 1801 թվականին դեպի Եջմիածին ճանապարհելին՝ վախճանվում Թիֆլիս քաղաքում:

Նրանկահիշատակ արքեպիսկոպոսի մահվանից շատ չանցած Աստրախանի տպարանը քայլապատճեն է....

Ինչպիս երևում է Արդության արքեպիսկոպոսի մի նամակի բովանդակությունից, նա ցանկանում էր իր տպարանում տպել հայերեն Աստվածաշունչ շքեղ և պատկերազարդ, որի համար էլ փորագրել էր տվել պղնձի վրա մի քանի հարյուր պատկեր, իուղոր ծախքեր անելով դրա համար, սակայն Հնդկաստանից սպասվող գումարների ստացումը ուշանալով՝ այդ ցանկությունը մնաց անկատար և Հովսեփի արքեպիսկոպոսը Կով-

կաս գալով, թե՛ տպարանը փակվեց և թե՛ կորստի մատնվեցին այդ կլիշեներով։

Տպարանի համար մյուս դժվարությունը ձեռագիր բնագրերի պակասությունն է եղել։ Ահա թե ի՞նչ է գրում նա այդ առիթով իր հնդկահայ բարեկամներից մեկին. «Գրեցի ի բազում ուրեմն գտանել վասն մեր զգրչալ գրեանս նախնեցն մերոց և զպատմութիմս. ոչ ուստիք գտի զօգնութիմ, բայց ի Զուլայու, որ վշտակիր եղբայրն իմ Յակոր աստուածարան վարդապետն և պարոն Կարապետն Գալստեան քանի մի գրեանս առաքեալ էին, զքանի մի ևս ունին ի պատրաստի... սակայն վասն ճանապարհացն փոխման և բռնաւորացն բռնութիւնն՝ ոչ կարողանան առաքելու։

Ո՛չ մի դժվարություն և անհաջողություն չէր հուսահատեցնում Հովսեփի արքեպիսկոպոսին։ Տեսնելով, որ իր ուզած ձեռագրերը չեն գտնվում, նա հրատարակում էր այն, ինչ որ ունենում էր, միաժամանակ հետևելով ձեռքից բաց շթողնել նորերը գտնելու առիթը։ Մինչև անգամ 1800 թվականին, երբ արդեն ճանապարհելու էր դեպի Եջմիածին, լսում է, որ Թիֆլիսում գրավ դրված երկու արկդ ձեռագրեր կան, իսկուն նամակ է գրում այնտեղ ապրող իր ծանոթներից մեկին՝ գնելու այդ ձեռագրերը և փնտրելու նորերը Խոյի և Սալմաստի գավառներում։

Այս այլպիսի անսպառ եռանդի տէր անձնավորությունն էր Արդությանը, որ կարողացավ յոթը տարվա ընթացքում տպագրության ասպարեզում այնքան քան անել, որքան չէր կարող անել մեկ որիշը։ Մեծ ազդեցությունն էր գործում նրա բացակայությունը տպարանի վրա։ Ո՛չ պակերծիմաստ Թաղեռս վարդապետը և ո՛չ էլ աստվածաբանական գիտությամբ «հովակյալ» Կարապետ վարդապետը չին կարողանում փոխարինել սրբազնին։ Բավկան էր որպեսզի նա հեռանար Նոր-Նախիշևանից, տպարանի աշխատանքներն իսկուն դանդաղում էին, հենց որ նորից վերադառնում էր՝ աշխատանքները նոր թափով վերսկսվում էին։ Մի խոսքով, նա տպարանի ոգին էր, նրա շարժիքը ուժը։ Բայց, հճարկե, չի կարելի ասել, որ նրա ներկայությամբ ամեն ինչ հարթվում էր։ Քիչ չէին լինում դեպքեր, երբ տպարանի գործերը չափազանց վատանում էին և պարտատերերը սպառնում էին գրավել այն։

1. Գյուտ ապագ քահանա Աղանդան, «Դիվան Հայոց պատմության», Թիֆլիս, 1911 թ., Գիրք թ., էջ 500 (Ժամանակագրությունը)։

2. «Թագմագիպաց», Վենետիկ, 1896 թ., էջ 548—549.

3. «Կավկազի Վեստնիկ», Տիֆլիս, 1901 թ., ստր. 204, «Պիսում Խոսիֆ Արգւանեցու գրան»։

Այդպիսի գեղքերում Արդությանը, ովկորված իր կատարած գործի վեհ գաղափարով, զինված էր Համբերությամբ, դիմանում նեղություններին և ուրիշներին էլ Հորդորում հետևելու իրեն. «Նոքա որ ազգասէր են և ազատութիւն ազգին ցանկան, պարու են և նեղութեանցն Համբերել», — պատճառաբանում էր իր վարժումքը Հովսեփ արքեպիսկոպոսը¹.

Անհրաժեշտ է նշել մի հանգամանք ևս, որ Արդությանի Համար տպագրության ասպարեզում թափած ջանքերն աննպատակ չէին. նա իր այդ գործունեությունը սերտորեն շաղկապում էր Հայրենիքի ազատագրման համար տարվող գործին՝ որպես այդ գործին օժանդակող միջոցի և երկրորդ՝ կըրթված և զաստիարակված լինելով այնպիսի նշանագոր հոգեբորականի մոտ, որպիսին էր Սիմեոն կաթողիկոսը, ինչպես և ժառանգելով իր ուսուցի լավագույն հատկություններ՝ Հայրենասիրությունը, եռանդը, հետևողականությունը, ջերմ սերը դեպի աշխատանքը, Հովսեփի արքեպիսկոպոսը մանուշաղության շեր մատնում սկսած գործը, այլ, հայթահարելով դժվարությունները, հասցընում էր հաջող վախճանի:

18-րդ դարի վերջին քառորդին, երբ Հովսեփ արքեպիսկոպոսը, Ռուսաստանում, իր հրատարակություններն էր կատարում, Հայկական տպագրության սկզբնաւորությունից անցել էին երկու և կես հարյուրամյակներից ավելի տարիներ: Այդ ժամանակաշրջանում թեև տպագրական տեխնիկան նշանակալից շափով առաջադիմել էր և Վենետիկում, Կոստանդնոպոլսում, Լիոնում, Նոր-Ճուղալուս, Ամստերդամում, Մարսելում, Տրիեստում, Երուսաղեմում, Մադրիդում և այլ տեղերում բավականին թվով Հայերեն գրքեր էին հրատարակվել, բայց և այնպես՝ Հայկական տպագրության գործը գտնվում էր իր նախկին ծանր պայմանների մեջ, Հայաստանից հեռու ոտար հորիզոնների տակ դեգերող Հայության ձեռքում: Այլ կերպ շեր

էլ կարող լինել: 18-րդ դարի վերջերին հայ ժողովուրդը հեծում էր օտարերկրյա տիրապետողների կրնկի տակ: Հայրենի երկիրը պատառ-պատառ արված բազմաթիվ մանրու մեծ բռնականների միջև. ներքին երկպառակություններին վերջ չկար. ասպատակությունը, գերեվարությունը և կողոպուր սովորական երեւլցիներ էին: Այսպիսի դության մեջ ի՞նչ ինուր կարող էր լինել Հայրենիկության մասին, այն էլ այնպիսի հաստատության, որպիսին էր տպագրականը: Եթե այդպիսի գործ էլ լինում էր, ապա խափանում անխուսափելի էր²:

Արդության արքեպիսկոպոսի համար ապագրության գործը՝ իր ժողովրդի լուսավորման գործն էր. ահա թե ինչո՞ւ այնքան մեծ նվիրվածությամբ ու անհուն սիրով նա իր բազմազբաղ կյանքը, գիշեր ու ցերեկ, մաշեցնում էր տպագրական գործում եղող նույնիսկ ամենափոքր տեխնիկական սխալները վերացնելու համար: Այդ աշխատանքը Արդությանի ամենասիրելի գործն էր. «Գիտացիս, շիք ինչ ի վերայ աշխարհի ախործ հոգույ իմոյ, — գործ էր Արդությանը իր ժրաշան աշխատակցին՝ Թաղեռս վարդապետին, — քան զյառաջնալն տպարանի ընդուրում անձն իմ եղի...»³:

Ահա այսպիսին էր Արդության արքեպիսկոպոսի վերաբերմունքը դեպի տպագրական գործը:

2. Հայտնի է, որ Սիմեոն կաթողիկոս երեանցին էղմանում, 18-րդ դարի 70-ական թվականներին, տպարան էր հիմնել և տպարանից ոչ հետու, վանքի պարիսպներից դուրս, թթաշխության գործարան կառացել: Այդ կովուրական ձեռնարկությունները, որոնք 19-րդ դարի կեսերին միակն են եղել ամրոց Հայաստանում, երկար կյանք շեն ունեցել (անմասնես եպիսկոպոս Շահնաթունյանց, «Ստորագրության կաթողիկէ էղմանցնի և հինգ զաւառացն Արարատյաց, էղմանցն, 1842 թ., Հատոր Ա, էջ 99—100):

3. Հայկական ՍՍԾ Պետական մատենագրանի ձեռագիր № 2949, թ. 224ա:

¹. «Արարատ», 1888 թ., էջ 366:

